

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի կառավարման մարմինների տարեկան
ՁԵԿՈՒՅՑ

1. Ընկերությունը իրականացնում է բազմատեսակ գործունեություն, որը հիմնականում առնչվում է շինարարության ոլորտին: Այնուհանդերձ Ընկերության համար առավել կարևոր գործունեության ոլորտներից կարելի առանձնացնել շինարարությունում ներքին և արտաքին հարդարման համար օգտագործվող ներկերի, չոր շաղախների և բետոնե բլոկների արտադրությունը: Թվարկված այդ երեք արտադրատեսակների տեղական արտադրության մասով Ընկերությունը Հայաստանում զբաղեցնում է առաջատարի դիրքերը:

2011թ-ի վաճառքի ծավալները ներկայացվում են ստորև՝

Անվանումը	2010 P	2011 A	փոփոխությունը A/P
Ներկեր	504,221	489,190	-3%
Չոր Շաղախներ	1,978,593	1,999,867	1%
Բետոնե բլոկներ	283,491	356,674	26%
Ապրանքներ	1,086,605	1,082,044	0%
Աշխատանքներ և ծառայություններ	260,738	169,105	-35%
Ընդամենը իրացում	4,113,648	4,096,880	

2. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ մինչև սույն զեկույցը պատրաստելու օրը տեղի չեն ունեցել այնպիսի կարևոր դեպքեր, հիմնական ռիսկեր կամ անորոշություններ, որոնք կարող էին էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա, իսկ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի համաձայն էական համարվող տեղեկությունը տեղադրված է մեր պաշտոնական կայքում:

3. Չարգացման տեմպերի ապահովման համար Ընկերությունը 2012թ-ի կեսերից նախատեսում է իրագործել հետևյալ հիմնական նպատակները՝

- Հայաստանում 20%-ից ավել վաճառքի աճի ապահովում ի շնորհիվ ամենամյա աճի և զարգացման տեմպերի և նոր արտադրատեսակների շուկային առաջարկելը,
- Վրաստանում սալիկի սուսինձի արտադրություն ծավալների աճ և Ընկերության կողմից արտադրված այլ արտադրատեսակների Վրաստան առաքում:

Գործ. տնօրեն

Պ. Բաղալյան

Ֆին. տնօրեն - գլխ. հաշվ.

Ա. Բալասանյան

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատու անձանց
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն հայտարարությունը տրվում է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի 2011թ-ի ֆինանսական հաշվետվությունների կապակցությամբ, որի նպատակն է կարծիք արտահայտել, թե արդյոք Ընկերության ֆինանսական հաշվետվությունները տալիս են ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի գործունեության ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը համաձայն՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և միջազգային ստանդարտների ուղեցույցներըների և այլ համապատասխան իրավական ակտերի:

Մենք ընդունում ենք մեր պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացման համար:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով, պաշտոնապես հայտարարում ենք՝

Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, ինչպես նաև

- Հաշվետու ժամանակաշրջանում չեն գրանցվել,
 1. Դեկավարության կամ աշխատակիցներից կողմից ներքին վերահսկողական համակարգի վրա կարևոր նշանակություն ունեցող խախտումներ և խարդախության դեպքեր,
 2. Գործող օրենսդրության դրույթների խախտման կամ ոչ լրիվ կիրառման մասին կարգավորող մարմինների ծանուցագրեր, որոնք կարող էին ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն ունենալ,
- Մենք չունենք այնպիսի պլաններ կամ մտադրություններ, որոնք կարող են էապես փոփոխել ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակտիվների ու պարտավորությունների դասակարգումը կամ հաշվեկշռային արժեքը:
- Մենք չենք պլանավորում հրաժարվել գործող որևէ ծառայության մատուցումից կամ չունենք այնպիսի պլաններ ու մտադրություններ, որոնք ավելորդ կամ հնացած պաշարների առաջացման պատճառ կհանդիսանան, ինչպես նաև պաշարները գրանցված չեն իրացման գուտ արժեքից բարձր արժեքով:
- Ընկերությունը իր բոլոր ակտիվների նկատմամբ ունի վերահսկման իրավունք, և գոյություն չունի այդ ակտիվների վրա կալանք դնելու որևէ իրավունք կամ գրավի երաշխիք:
- Մեր կողմից պատշաճ ձևով ֆինանսական հաշվետվություններում հաշվառվել կամ արտացոլվել են բոլոր պարտավորությունները: Մենք հավաստիացնում ենք, որ մեր կողմից երրորդ անձանց չի տրվել որևէ երաշխիք, որի համար կպահանջվի բացահայտում:
- Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և մինչև սույն նամակի ստորագրման պահը տեղ չեն գտել այնպիսի դեպքեր, որոնք պահանջում են ֆինանսական հաշվետվությունների ճշգրտում կամ լրացում, կամ լրացուցիչ բացահայտում:
- Ընկերությունը ներգրավված չի եղել որևէ դատական պրոցեսում:

- ❑ Կազմակերպությունը գործել է կնքված պայմանագրերի պայմանների համապատասխան, որոնց չկատարումը կարող նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- ❑ Կազմակերպության բոլոր իրացման գործարքները ավարտված բնույթի են և բացառվում են դրանց վերանայում:
- ❑ Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված վաճառների գծով դեբիտորական պարտքերը իրենցից ներկայացնում են դեբիտորների առկա պարտքերը, որոնք առաջացել են մինչև հաշվետու ամսաթիվը կամ հաշվետու ամսաթվի դրությամբ:
- ❑ Ֆինանսական հաշվետվությունները բացահայտում են մեզ հայտնի բոլոր հարցերը, որոնք կարող են ազդել կազմակերպության ապագայում գործունեություն ծավալելու հնարավորությունների վրա, ներառյալ էական պայմանները և դեպքերը, մեր պլանները և մտադրությունները:
- ❑ Այն դեպքերում, երբ ստացվել է կապակցված կողմերի առկայություն, մենք բացահայտել ենք կապակցված կողմերի հետ կապված բոլոր էական գործառնությունների բնույթը
- ❑ Մեր կարծիքով, տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական խեղաթյուրումներ:
- ❑ Մենք հաստատում ենք, որ պատասխանատվություն ենք կրում ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու համար:

Հ/Հ	Անուն ազգանուն	Պաշտոնը և այլ նկարագրություն	Պատասխանատու անձի պատասխանատվության շրջանակը	Պատասխանատու անձի ստորագրությունը
1	Բեգլարյան Սամվել	Տնօրենների խորհրդի նախագահ 99.91% բաժնետոմսերի սեփականատեր	Բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
2	Բաղայան Պապ	Տնօրենների խորհրդի անդամ, գործադիր տնօրեն	Տնօրենների խորհրդի և ընթացիկ գործունեության ղեկավարման օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
3	Ղավթյան Իրինա	Տնօրենների խորհրդի անդամ	Տնօրենների խորհրդի օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն	
4	Բալասանյան Արմեն	Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ	Ընթացիկ գործունեության իրականացման օրենսդրությամբ, կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն	
5	Սողոկինա Իրինա	Վերստուգող	Ընթացիկ գործունեության իրականացման կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն	

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

2011թ-ի հաշվետվություն

«ՇԵՆ – ԿՈՆՑԵՆՆ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

թողարկողի անվանումը, (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպական - իրավական ձևը

0043, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2, հեռ. (37410) 46-01-01,

էլ. փոստ՝ shen@shenconcern.com, ինտ. կայքը՝ www.shenconcern.com

(թողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն և կապի միջոցները)

N 1, 02.05.2012թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ 5, 6-րդ թողարկմամբ անվանական զեղչատոկոսային պարտատուճ

արժեթղթերի քանակը՝

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝

«Մենը՝ ստորագրող անձինք, հավաստիագնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Պապ Բաղայան (անուն, ազգանուն)	գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Բալասանյան (անուն, ազգանուն)	ֆինանսական տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Պապ Բաղայան (անուն, ազգանուն)	գործադիր տնօրեն (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
----------------------------------	-----------------------------	------------------	-----------

Կ.Տ.